




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՀԱՐԻ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերակառուցման առթիվ, վեհափառ Հայրապետի սիրալիր համաձայնությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան պեղումներ կատարեց Ս. Սեղանի բեմի տակ, ղեկավարությամբ ճարտարապետ Ալ. Սահինյանի:

Սույն քվակների ապրիլի 8-ին երևանից հրավիրված հնագետների և ճարտարապետների հանձնաժողովը, տեղում բնեղով պեղումների արդյունքները, հաստատեց հետևյալը.

ա) Այժմյան Ս. Սեղանի տակ, մոտ 1,5 մետր խորությամբ, հայտնաբերվեցին և դարձան վաճառ Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի խարխսները, բեմը և վեմ ֆարերը, որոնք պահպանված են առանց փոփոխության:

բ) Ե դարի բեմի որոշ սրբատաշ ֆարերի վրա պահպանված են հնագույն որմանկարների մնացորդներ:

գ) Ե դարի Սեղանի կառուցվածքի ներսում պահպանված են առավել հնագույն խորանի պատեր, որոնք, ըստ իրենց կառուցվածքի և շինարարական տեխնիկայի, գոյություն են ունեցել մինչև Ե դարը: Այն կարող է լինել Ս. Գրիգոր Լուսավորչի օրով (301 թ.) կառուցված խորանը կամ քերես պատկանել է առավել հնագույն շրջանի սրբավայրի:

դ) Ե դարի բեմի ներքևի շարվածքի մեջ, հորիզոնական ուղղությամբ, հայտնաբերված

է ուրարտական ժամանակաշրջանի (9-10 դար Բ. ա.) սրբատաշ որձափարից (բազալտ) հղկված մի մեծ կոթող, որն իր չափերով (3,10×0,73×0,53 մ.) հանդիսանում է ցարդ հայտնի ուրարտական կոթողներից ամենամեծը:

Այդ հազվագյուտ հուշարձանը վկայում է Մայր Տաճարի ստեղծումից ավելի քան մեկ հազարամյակ առաջ, Ս. Էջմիածնի շրջապատում, դեռևս ուրարտական ժամանակաշրջանից գոյություն ունեցող՝ մշակութային կյանքի կենտրոնի առկայությունը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց հնագետ-ճարտարապետների առաջարկությունները, այն է՝

ա) Մայր Տաճարի նոր կառուցվելիք Ավագ Սեղանի մակերեսը պատել երկաթբետոնով, պահպանելով բեմի տակ պեղումների հետևանքով ներկայիս առաջած գեոմեափոր տարածությունը իր անցքերով և Ս. Սեղանի հետևի կողմից (քանգարանից) հատուկ մուտք բանալ ընդհանուր դիտման համար, որպես սրբավայր և պատմական հուշարձան:

բ) Ուրարտական որձափար՝ կոթողը (ստեյան) դուրս հանել իր տեղից և կանգնեցնել Ս. Էջմիածնի բակում մի հարմար տեղ, հատուկ պատվանդանի վրա, իբրև հուշարձան-կոթող:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԻ

